ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-**134**[6]-31.10.2012,**01.02.2013**-ՊԻ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 332.1 հոդվածով՝

«Հոդված 332.1. Դատավորների որակավորման քննության կամ մասնագիտական պատրաստման քննությունների հարցերի գաղտնիությունը խախտելը

1. Դատավորների որակավորման քննության հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. Արդարադատության ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում հանձնվող քննությունների հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարքը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Հոդված 2. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2013 թվականի սեպտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից: